

ԳԵՎՈՐԳ ԶԱՀՈՒԿՅԱՆ (Մենդյան 70-ամյակի առթիվ)

Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր Գևորգ Թեղարի Զահուկյանը ոչ միայն մեր հանրապետության, այլև Խորհրդային Միության ամենանշանավոր լեզվաբաններից է, որի մեծությունը ընդունվել է տա-կավիճի տասնամյակներ առաջ. հա ագիտության և ընդհանուր ու համեմատական լեզվաբանու-թյան Լոնդոնական ալեհուրեմ վայելում է բազմաճանաչ գիտնականի, խորաքափանց հետա-զոտողի համբավ:



Գ. Բ. Զահուկյանը ծնվել է 1920 թ. ապրիլի 1-ին, ՀԽՍՀ Կալինինյի շրջա-նի Շահնազար գյուղում: 1937 թ. ըն-դունվելով Երևանի պետական հա-մալսարանի բանասիրական ֆակուլտե-տը՝ 1941-ին այն ավարտել է գերա-ւաճությամբ: Հաջորդ տարի Գ. Զա-հուկյանն անդին ակադեմիկոս Գր. Դա-վանցյանի աշխատանք էր համալսա-րանում: 1942 թ. մարտին հա գորա-կրչվել է Խորհրդային բանակ, իսկ 1944-ին վերադառնալով բանակից՝ շա-րունակել է ասպիրանտական ուսում-նառությունը՝ այս անգամ Հր. Ահառ-յանի ղեկավարությամբ: 1947 թ. Գե-վորգ Զահուկյանը պաշտպանել է դի-սերտադիա «Հայ Բերականությունը I—XV դդ.» թեմայով և արտոնել բա-նասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Երևանի պետական համալսարանում Զահուկյանի գիտամեթոդական գոր-ծունեությունը սկսվել է ղևսես 1954 թ.: Այդ ժամանակից սկսած հա դասա-վանդել է ժամանակակից հայոց լեզու, գրաբար, գերմաներեն, ճին հունարեն.

լեզվաբանության պատմություն, ընդհանուր լեզվաբանություն, համեմատական բերականություն և այլ առարկաներ: 1948 թ. մինչև 1957 թ. Գ. Զահուկյանը Լզել է օտար լեզուների ուսմանի վարիչ: 1955 թ. հա հաջորդությամբ պաշտպանել է «Հայ լեզվաբանական միտքը և աշխարհա-բարի հարգերը XVIII—XIX դդ.» թեմայով գոկտորական դիսերտացիան: Երկու տարի անց հա մրցույթով անցել է Երպես Խոսնա-գերանական բանասիրության ուսմանի վարիչ՝ այդ պաշ-տանքը վարելով մինչև 1970 թ.: 1958 թ. ստացել է պրոֆեսորի կոչում, 1965 թ. հա ղեկավարել է գիտության վաստակավոր գործչի կոչում: 1968 թ. Գ. Զահուկյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ քրթակից աղում, իսկ 1977 թ.՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

Գ. Զահուկյանի տպագիր մեհագրական ուսումնասիրությունների շարքը սկսվել է «Բերա-կանական և ուղղագրական աշխատությունները ճին և միջնագարյան Հայաստանում (V—XV դդ.)» գրքով, որ եկավ լրացնելու բնության երթակա շրջանի ուսումնասիրության պա-

կասք՝ Ն. Աղոնցի հայտնի գրեթե նետո մե նոր աստիճանի հասցենեով հայ բազմադարյան
 ֆեոդալիզմի պատմության ուսումնասիրությունը:

«Հայերենի պատմահամեմատական ֆեոդալիզմի» աշխատանքով Գ. Զահուկասը
 ներկայանում է որպես պատմահամեմատական լեզվաբանության ակադեմիկոս Երկայացուցիչ-
 ներից մեկը, օր Ա. Մելիքի «Հայերենի համեմատական ֆեոդալիզմի» ուղղագծից՝ հետո
 (1936 թ.) մի նոր աստիճանի է հասցրել այդ քննադատը:

Գիտնականն իր բազմակողմանի գիտելիքներով, հեղեվրոպարանության նորագույն նվա-
 ճումների հաշվառմամբ, բացահայտել և ճշտել է ինչ հայերենի լեզվական իրողությունների
 մի շարք կենդանու, հանախ բուրգովին շուտաբանված. ֆեոդալիզմի առարկա ղարձած հարցեր
 Գ. Զահուկասի գիտական կարողությունների առաջին լուրջ դրսևորումը այդ քննադատում
 հայոց լեզվի պատմահամեմատական ֆեոդալիզմի կարևոր հատվածներից մեկի՝ հին հայե-
 բների հոլովման համակարգի համեմատական ուսումնասիրությունն է, որը ապագրվել է «Հին
 հայերենի հոլովման սխեման» խորագրով (1959): Հեղեվրոպական լեզուների
 համեմատական ուսումնասիրության ասպարեզում հեղինակը պարզել է հեղեվրոպական հոլով-
 ման համակարգից գրաբարի հոլովման համակարգին անցնելու ուղին. հիմք ունենալով այն
 ընդհանուր օրինաչափությունները, որ առկա են գրաբարի և ցեղակից լեզուների համապա-
 տասխան ոլորտում: Երև հայերենագիտության մեջ մինչ այդ գրեթե անհնար է համարվել
 (Ա. Մելիք, Հր. Անադան) գրաբարի հոլովման համակարգում բառի ուղղական ձևի հիման
 վրա նրա այս կամ այն հոլովման պատկանելի որոշելը. ապա Գ. Զահուկասի գիտական պրո-
 պրոտոմները հասցրել են այդ խնդրում որոշակի օրինաչափությունների բացահայտմանը: Նա
 առաջարկել է հոլովման տիպերի նոր դասակարգում, պարզել հեղեվրոպական ֆեոդալիզմի
 հերթադարյան արտացոլման օրինաչափությունները հայերենում:

1961 թ. «Archiv orientalist»-ի 3-րդ համարում լույս է տեսել Գ. Զահուկասի «The
 Hayaş Language and its Relation to the Indo-European Languages» աշխատանքը,
 որտեղ անձնատվությունների և տեղանունների մանրակրկիտ ֆեոդալիզմի հաշվառումը
 հեղինակին բերել է այն եզրակացության, որ Հայաստանի լեզուն պատկանում է Հեղեվրոպական
 լեզուների հին անատոլիական լեզվախմբին: Սակայն հայաստանի բնույթի հարցը հետազո-
 տում չի զսպարում նրան զբաղեցնելուց. և վերջիվերջո Զահուկասը հանդես է գալիս նոր աշ-
 խատություններով, որոնց մեջ հիմնավորում է հայերենի՝ հայերենի (ֆոնետիկ) վիճակը
 իրենցիկ տեսական:

Բազմաթիվ են ակադեմիկոս Գ. Զահուկասի հեղեվրոպական լեզուների հետազոտ ցեղակ-
 ցության հարցերին նվիրված աշխատությունները: Կարելի է նշել «Урартский и индоевро-
 пейский языки» (1963), «Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и
 кавказских языков» (1964) մենագրությունները, որտեղ գիտնականը ձգտումնաբանական
 ընդհանրությունների բացահայտման և հաստատման նպատակ է հետապնդում: Մատենաշնչով
 ուրարտերենի և հեղեվրոպական լեզուների ցեղակցական կապը, հեղինակն ուրարտերենը հա-
 մարում է, ոչ թե հեղեվրոպական հիմք լեզվի անմիջական ժառանգ. այլ նրա հետ կապը
 դեռևս Լուրսիով կառուցվածքի գոյության շրջանում կորցրած եզրային լեզու: Սա գիտության
 մեջ առաջին փորձն է հիմնավորելու խառնա-ուրարտական լեզվաբնույթի նուստրատիկ ընդ-
 հանության պատկանելու վարկածը: Զահուկասն այս վարկածը լրացրել է մի նոր տեսակե-
 տով, որով ապացուցվում է Կիպրոսի հնագույն լեզվի՝ էտեոկիպրերենի պատկանելի խառնա-
 ուրարտական լեզվախմբին:

«Ակնարկներ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության» ռուսերեն լեզվով լույս
 տեսած (1967) աշխատանքը հայոց լեզվի նախագրային շրջանի գրեթե շուտաբանված
 պատմության առաջին ամբողջական շարադրանքն է՝ մեր լեզվի համապատասխան հատվածի
 ստալինի գիտական շրջանադաժմամբ: Հայերենի պատմահամեմատական ֆեոդալիզմի ասպա-
 բեզում առաջին սեզամ խորագրին ուսումնասիրության նյութ են դարձվում հեղեվրոպական
 բառաշարների հիմնական և երկրորդային նստվածքները, պարզաբանվում հայերենի բաղա-
 ձայնական համակարգի կազմավորման սկզբունքները, նոր ստուգաբանությունների հիման վրա
 որոշվում է առաջին լեզվի և երկրորդի բնույթը: Մենագրության մեջ պարզվում են հեղեվրո-
 պական հիմնալեզվի նախնական վիճակի, տեղի, հեղեվրոպական բարբառների փոխհարաբե-
 րության հարցերը: Նախագրային հայերենի ֆեոդալիզմի կարևոր օրինաչափությունը,
 որը հիմնված է առաջին և երկրորդ մայնացումների տարբերության վրա, հստակ ձևակերպում
 է գտնում նշված աշխատանքում: Այդ ներդրումը հայագիտության մեջ ստացել է Զահուկա-

յանի օրենքները, որով սահմանվում են մասնավորապես քաղաքային հնչյունների կապակցության տիպերի փոփոխությունը. հետևյալով լինելու փայնացման որոշակի օրենքափոխությունները:

Պետք է նշել, որ հայերենի և Փոքր Ասիայի, ինչպես նաև Բալկանյան բերակղզու հին լեզուների փոխհարաբերությունների հարցի ուսումնասիրության բնագավառում մեր ականավոր լեզվաբաններ Հր. Աճառյանի և Գր. Ղափանցյանի ներդրումը նշանակալից է. սակայն ֆենված հարցերին Գ. Զահուկյանը նորովի է մոտեցել իր «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» (1969) մենագրության մեջ՝ նպատակ ունենալով լեզվաբանության վերջին տասնամյակների հսկայական նվաճումները հաշվի առնելով ֆենել հայոց լեզվի ծագման ու վաղ շրջանի պատմության հարցերը. որոնք մեծ խորությամբ և ընդգրկման լայն սահմաններով դիտարկվել են հնդիեանի «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան» ծանոթիչի աշխատանքում (1987): Հայոց լեզվի ամբողջական պատմության ստեղծումը, որն իրագործվում է ակադեմիկոս Գ. Զահուկյանի ղեկավարությամբ, հայերենագիտության խաղաղագույն նվաճումներից է: Հայոց լեզվի պատմության շրջանառվածման, լեզվական գրականության ժամանակագրական բաշխման սկզբունքների մշակումը այդ աշխատանքում Գ. Զահուկյանին է:

Զահուկյանի շրջանառվածումը հաշվի է առնում լեզվական համակարգում, գործառնության բոլոր ոլորտների զարգացման օրենքափոխությունները, լեզվական հետազոտողների միտումների ընդհանուր ուղղվածությունը և այլն: Իր առաջադրած, լայնությամբ և գիտական խորությամբ մշակած սկզբունքների լավագույն կիրառման օրինակ է հայոց լեզվի նախագրային ժամանակաշրջանը ներկայացնող վերահիշյալ հատորը, որի առաջին մասում հնդեվրոպական լեզվի, հնդեվրոպացիների կյանքի, մշակութային ընդհանուր պատկերի վրա դիտարկվում են հայոց լեզվի հնդեվրոպական քաղաղրիչները, հզորվում է հայոց լեզվի տեղը հնդեվրոպական քարտեզների մեջ: Հայոց լեզվի վաղնշական շրջանի կառուցվածքի բառապաշարի ֆենությունը հետո, աշխատության մեջ Գ. Զահուկյանը ներկայացնում է հայոց լեզվի հնագույն շրջանի պատմությունը ընդհուպ մինչև V դարի լեզվավիճակի կազմավորումը: Այս աշխատության մեջ նույնպես, բնականաբար, Գ. Զահուկյանը հսկայական ուղադրություն է նվիրում այլ լեզուների հետ հայերենի ունեցած փոխադրությունների հարցին: Այս մեծածիճ աշխատանքի համար 1989 թ. նա արժանացավ հանրապետության պետական մրցանակի:

1960—1982 թթ. լույս է տեսել Գ. Զահուկյանի «Լեզվաբանության պատմություն» երկհատոր մեծածավալ աշխատանքը, որը համապարփակ և հանրագիտական բնույթի արժեքավոր գործ է և որպես այդպիսին իր տեսակի մեջ առաջինը: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերն ընդգրկող լեզվաբանության պատմության շարադրանքի փորձեր ֆիչ են եղել ինչպես Խորհրդային Միության, այնպես էլ համաշխարհային լեզվաբանության մեջ: Լեզվաբանական ուսումնական պատմության, մեթոդաբանական հարցերի վերաբերյալ Զահուկյանի զննատանջանքները երեք տասնամյակ հետո էլ պահպանում են իրենց ուժը. ներկայացնում գիտության արդի մեկարդակը:

Կարելի է անվարան պնդել, որ Զահուկյանի յուրաքանչյուր աշխատություն ոչ միայն հանրագումարի է բերում այդ բնագավառում ձեռք բերած նվաճումները, նշում հետազոտողների անդամները, այլև նոր ուղղություն, նոր մեթոդների հիմք դնում: Այդ առումով հատկանշական է «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությունը, որն ըստ էության հայ բարբառագիտության հանրագիտարան է: Նրա տեսադաշտից դուրս չեն մնացել հայ բարբառների առաջացման, նրանց տեղաբաշխման և փոխհարաբերությունների հարցերը: Այդ են վկայում, քացի վերահիշյալ մենագրությունից, մի շարք հոդվածները, որ նա տպագրել է «Պատմաբանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Вопросы языкознания» պարբերականներում և այլուր: Գ. Զահուկյանը հետևողականորեն զբաղվել է հայ բարբառների դասակարգման նոր սկզբունքների մշակման հարցերով: «Հայ բարբառագիտության» մենագրության մեջ նա դիտարկել է համաժամանակյա և պատմական բարբառագիտության հարցերը: Համաժամանակյա բարբառագիտության բնագավառում մեծանուն հայերենագետի խնդիրն է եղել՝ ի տարբերություն բարբառագիտական նախորդ բոլոր դասակարգումների, որոնք գերազանցապես միահասկանալիչ են եղել՝ հիմնված լինելով ձևաբանական կամ հնչյունական թեկուզ և ընդգծված մեկ հատկանիշի վրա, առաջ ֆաշել հայ բարբառների քաղաքական կապի դասակարգման սկզբունքը. հենվելով հանդերձ լեզվաբանական աշխարհագրության հայտնի դրույթների վրա, արմատապես վերանայել այն, հիմք դնելով բարբառագիտական մի նոր ուղղության՝ վիճակագրական բարբառագիտության: Վերջինս հաջողությամբ կարող է կիրառվել նաև հնդեվրոպաբանության բնագավառում: Բարբառների քաղաքականա-

նիշ դասակարգման մեթոդը խառնվում է այն դրույթի վրա, որի համաձայն բարբառային գույքաբանությունների ցանցի խտությամբ առանձնացվող կենտրոններից բացի, գոյություն ունեն նաև անցումային գոտիներ, որոնք պարզելու համար տարբերակիչ հատկանիշների բնութային գործը բավականին դժվարեցնում է: Խնդիրը բարդանում է հատկապես նրանով, որ հայ ժողովրդի պատմական նակատագրի հետ կապված բազմաթիվ տրոպոգոգներ և տեղանանությունները ստեղծել են տարբեր բարբառների դասավորության խառնադեպ պատկեր: Լայնորեն ազդեցության ենթարկվել են հատկապես առաջին անգամ ներմուծվող հաշվիչ մեխանիզմները օգնությամբ դասակարգելով ժամանակակից հայ բարբառները՝ Գ. Զանուկյանը միաժամանակ պարզել է հայագիտության համար էական նշանակություն ունեցող մի շարք այլ հարցեր՝ V դարի հայ բարբառների վիճակը և հետագա տեղաշարժերը, բարբառներում պահպանված ճեղքվածության արմատները, բարբառային միավորների (բարբառախումբ, բարբառ, խոսվածք և այլն) որոշման չափանիշները, գրական լեզուների յարաբառային հիմքերը, բարբառների «մաքրության» աստիճանը և այլն: Գ. Զանուկյանի մշակած հարաբերակցական բնականության հիմունքները, որոնք բնականորեն են հատկապես «Հայոց լեզվի տեսության հիմունքներ» (1974) աշխատության մեջ, միանգամայն նոր տեսանկյուններ են մտցնում ինչպես ժամանակակից հայոց լեզվի, այնպես էլ առհասարակ ցանկացած լեզվի նկարագրական հետազոտության մեջ: Ընդհանուր և հայ լեզվաբանության ոլորտում կատարած հետազոտության արդյունքները խտացված են Գ. Զանուկյանի «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» (1978) մենագրության մեջ, որ (ինչպես և Զանուկյանի մի շարք այլ աշխատանքներ) լույս է տեսել հայերեն և ռուսերեն լեզուներով: Անվանի գիտնականի աշխատանքները աչքի են ընկնում ոչ միայն նյութի խոր ու ամբողջական բնությունը, լեզվական իրականությունների կոտ համակարգմամբ, լեզվական օրինաչափությունների ներքին բնութագրմամբ, այլև սույն լեզվական շեղումների պատճառների, բնույթի հետևողական վերհանմամբ:

Գ. Զանուկյանը բազմաթիվ ստուգաբանություններ, հայերենագիտության այլևայլ հիմնահարցերի նվիրված ճառախոսներ, տառադարձության, ուղղագրության, տեղանանության և հարակից այլ խնդիրների նվիրված նախագծերի, որոշումների հեղինակ է. իր անմիջական շնորհակցությամբ են կազմվել լեզվի նվիրված որոշման լեզվի օրենքի նախագծերը:

Երկար տարիներ նա ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առերես տեղեկատվական կոմիտեի նախագահի տեղակալն է: Նրա շնորհակցությամբ մշակվել են հայ տեղեկատվության տեսության գիտական հիմունքները:

Ակադեմիկոս Գևորգ Զանուկյանը ոչ միայն ակնավոր գիտնական է, այլև գիտական աշխատանքի լավ կազմակերպիչ: Վերևում խոսված Երևանի պետական համալսարանում կատարած երկարամյա գիտամանկավարժական և կազմակերպչական գործունեության մասին: Հարկ է նշել նաև, որ 1962 թ. մինչև օրս նա վարում է ՀԽՍՀ ԳԱ Հր. Անտոյանի անվան լեզվի ինստիտուտի անօրենքի պաշտոնը: Շուրջ երեք տասնամյակի ընթացքում Գ. Զանուկյանի անմիջական ղեկավարությամբ ինստիտուտում զգալի աշխատանք է կատարվել: Ստեղծվել է մի միասնական և համախմբված գիտական կոլեկտիվ, որտեղ իշխում է աշխատանքային պահանջկատությունն ու սկզբունքայնությունը, որոշակիորեն բարձրացել է գիտական արտադրանքի որակը: Նա մեծ գործ է կատարել ինստիտուտի գիտահետազոտական պլանների ճշգրտման, գիտական կադրերի արդյունավետ տեղաբաշխման, արդի լեզվաբանության կարևոր ուղղությունների գծով երիտասարդ գիտական կադրեր պատրաստելու ուղղությամբ: Տասնամյակներ շարունակ Գ. Զանուկյանը հայերենագիտության գծով կոորդինացիոն խորհրդի նախագահն է և հետևում է գիտական նոր ուղղությունների գծով ուսումնասիրությունների պլանավորման գործին: Մեծանուն գիտնականը շանք չի խնայել ապահովելու ինստիտուտի աշխատակիցների մասնագիտական բարձր պատրաստվածությունը: Նրա ղեկավարությամբ անել են հայերենագիտ-դասագիտություն, բազմաթիվ գիտության բնկնածություններ:

Գ. Զանուկյանը չի մոռացել նաև դպրոցական և բուհական ուսուցման ոլորտները: Հայոց լեզվի սնարանության տեսական մասը, որ հաղորդությամբ կիրառվում է միջնակարգ դպրոցներում, ինչպես նաև հայոց լեզվի բուհական ձեռնարկի առաջին հատորի համապատասխան բաժինները գրված են նրա կողմից:

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր Գևորգ Ռեզաբի Զանուկյանի կյանքի անցած ուղին հայերենագիտությանը անմրեացող նվիրվելու պայծառ օրինակ է:

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ե. ՍԱՐԳՍՅԱՆ